ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՍՀՆ-ԲԲԱՀԾՁԲ-17/3-Ս

ք. Երևան **« 03 » մարտի 2017թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Աբգարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 70100200 (Յոթանասուն միլիոն հարյուր հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	“ Արթմեդ” բժշկական վերականգնողական կենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Կառավարական - 3 տուն	ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55ա
Երևանի թիվ 1 գանձապետական բաժին	“Ամերիաբանկ” ՓԲԸ
Հ/Հ՝ 900011016731 ՀՎՀՀ՝ 01506515	Հ/Հ՝ 157 000 306 116 0300
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝	ՀՎՀՀ՝ 00804703
Աշխատակազմի ղեկավար՝ Ա.Գրիգորյան	Տնօրեն՝ Ա. Աբգարյան
Կ.Տ. (ստորագրություն)	Կ.Տ. (ստորագրություն)

Հավելված 1
<<03>> մարտի 2017թ. կնքված
N ԱՍՀՆ-ԲԲԱՀԾՁԲ-17/3-Ս ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հիվանդանոցային բժշկական օգնության հոգեկան առողջության վերականգնողական ծառայությունների մատուցման

Ծառայության նպատակն է՝ սահմանային հոգեկան, սթրեսային, հետսթրեսային, նևրոտիկ խանգարումներով հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև 2017թ. ապրիլ ամսից բժշկասոցիալական փորձաքննության գործընթացում հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման շրջանակներում առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննության ենթարկված և հաշմանդամ չճանաչված անձանց՝ բազմակողմանի գնահատված կարիքներին համապատասխան կազմված վերականգնողական անհատական ծրագրերի (ՎԱԾ) հիման վրա, մատուցել հոգեկան առողջության և սոցիալ հոգեբանական վերականգնման ծառայություններ բազմամասնագիտական թիմով (հոգեբույժ, հոգեբան և ինտերնիստ, որոնք կարող են իրականացնել դեղորայքային կոմպլեքս բուժում, հոգեբանական օգնություն, ռելաքսացիայի սեանսներ՝ դեղաբույսերի կիրառման եղանակով, բուժիչ վերականգնողական մերսում, ֆիզիոթերապիա, գործիքային զննում և այլն): Սոցիալապես անապահով անձանց և ՀՀ կառավարության 04.03.04թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշման հավելված 1-ով հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված այլ սոցիալական խմբերի ներկայացուցիչներին ծառայություններ կմատուցվեն առողջապահական կազմակերպությունների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրված ուղեգրերի հիման վրա:

Ծառայության տեխնիկական բնութագրում խնդիր է դրվում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման, այլ ծառայություններից օգտվելու համապատասխան մատչելի պայմաններ:

Ծառայությունը կնպաստի նաև հաշմանդամություն ունեցող անձաց բնագավառում իրականացվող բարեփոխումների նպատակով փորձնական ծրագրի ներդրմանը, որի արդյունքում ակնկալվում է 2017թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին նոր մոտեցումներով իրականացվող առաջնակի բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հաշմանդամ չճանաչված անձանց կարիքին համապատասխան՝ ՎԱԾ-ի հիման վրա, բժշկական ծառայությունների տրամադրում:

Համապատասխան հիվանդատեսակներով բուժման հետևյալ քանակներն են՝

1. Հոգեկան առողջության վերականգնում ցերեկային ստացիոնարի պայմաններում՝ 58 հիվանդ
2. Սուր հոգեկան խանգարումների բուժում՝ 10 հիվանդ

3. Հոգեկան առողջության վերականգնում ստացիոնարի պայմաններում՝ 250 հիվանդ:

1. Հոգեկան առողջության վերականգնում ցերեկային ստացիոնարի պայմաններում – /58 հիվանդ/

1. Ծառայության անվանումը	Հոգեկան խանգարումների փսիխոթերապիա՝ ստացիոնարի պայմաններում
2.Ծառայության նկարագրությունը և ներկայացվող պահանջները	**Ծառայությունը մատուցվում է բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ՝ անձի բազմակողմանի գնահատման արդյունքում մշակված վերականգնողական անհատական ծրագրի (ՎԱԾ) հիման վրա:** **Հիվանդին դուրս գրելիս, կազմակերպությունը իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում է ՎԱԾ-ի «Տեղեկատվություն բժշկական վերականգնման մասին» բաժնում:** Հիվանդի բուժումը կազմակերպվում է միայն ցերեկային ժամերին: Բժիշկը, մասնագիտորեն գնահատելով հիվանդին, հիմնվելով հիվանդի և նրա ընտանիքի անդամների կարծիքի վրա, որոշում է ցերեկային ստացիոնարի պայմաններում հիվանդի բուժման կազմակերպման նպատակահարմարության հարցը: Կատարվում է անձի հոգեախտորոշում: Իրականացվում են համապատասխան ախտորոշիչ, բուժական, վերականգնողական համալիր միջոցառումներ անհատական և խմբային եղանակներով, ժամանակակից հոգեթերապևտիկ մեթոդների կիրառմամբ: Ծառայությունները մատուցվում են թիմային եղանակով՝ մեկ հիվանդի բուժման գործընթացում միաժամանակ ներգրավված են հոգեբույժը, հոգեբանը և ինտերնիստը, որոնք կարող են իրականացնել դեղորայքային կոմպլեքս բուժում, հոգեբանական օգնություն, ռելաքսացիայի սեանսներ՝ դեղաբույսերի կիրառման եղանակով, բուժիչ վերականգնողական մերսում, ֆիզիոթերապիա, գործիքային զննում:
3.Բուժման տևողությունը	22 օր
4.Բուժման ձևը	Բուժօգնություն հիվանդանոցային պայմաններում:
5.Հատուկ պայմաններ	Կամավորության սկզբունք՝ բժշկի ազատ ընտրությամբ

2. Սուր հոգեկան խանգարումների բուժում

/10 հիվանդ/

1. Ծառայության անվանումը	Սուր հոգեկան խանգարումների բուժում
2. Ծառայության նկարագրությունը	Համապատասխան ախտորոշիչ, հոգեբուժական,

և ներկայացվող պահանջները	վերականգնողական համալիր միջոցառումների անցկացում, հոգեբանական օգնություն: Անձի հոգեախտորոշում: Անհրաժեշտ դեղորայքով ապահովում:
3. Բուժման տևողություն	24 օր
4. Բուժման ձևը	Բուժօգնություն հիվանդանոցային պայմաններում:
5. Հատուկ պայմաններ	Կամավորության սկզբունք՝ բժշկի ազատ ընտրությամբ
6. Ուղեգրվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ մասնագիտացված բժշկական հաստատություններից տրամադրված եզրակացության հիման վրա	Նախարարության «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություն ուղեգրող» հանձնաժողովի կողմից:

3. Հոգեկան առողջության վերականգնում ստացիոնարի պայմաններում */250 հիվանդ/*

1. Ծառայության անվանումը	Հոգեկան առողջության վերականգնում՝ ստացիոնարի պայմաններում
2. Ծառայության նկարագրությունը և ներկայացվող պահանջները	**Ծառայությունը մատուցվում է բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ՝ անձի բազմակողմանի գնահատման արդյունքում մշակված վերականգնողական անհատական ծրագրի (ՎԱԾ) հիման վրա:** **Հիվանդին դուրս գրելիս, կազմակերպությունը իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը լրացնում է ՎԱԾ-ի «Տեղեկատվություն բժշկական վերականգնման մասին» բաժնում:** Անձի հոգեախտորոշում: Համապատասխան ախտորոշիչ, բուժական, վերականգնողական համալիր միջոցառումների անցկացում, հոգեբանական օգնություն՝ հոգեհոկման անհատական և ընտանեկան խորհրդատվության հոգեբանական դիտման եղանակներով: Անձնային և հոգեախտաբանական հոգեախտորոշում: Բուժում ժամանակակից հոգեմետ դեղամիջոցներով, սխեմաներով, հոգեթերապեվտիկ սեանսներով և հնարքներով, ինտենսիվ մեթոդներով:
3. Բուժման տևողություն	25 օր
4. Բուժման ձևը	Բուժօգնություն հիվանդանոցային պայմաններում: Ծառայությունները մատուցվում են թիմային եղանակով՝ մեկ հիվանդի բուժման գործընթացում միաժամանակ ներգրավված են հոգեբույժը, հոգեբանը և ինտերնիստը, որոնք կարող են իրականացնել դեղորայքային կոմպլեքս բուժում, հոգեբանական օգնություն, ռելաքսացիայի սեանսներ՝ դեղաբույսերի կիռարման եղանակով, բուժիչ վերականգնողական մերսում, ֆիզիոթերապիա, գործիքային զննում:

5. Հատուկ պայմաններ	Կամավորության սկզբունք՝ բժշկի ազատ ընտրությամբ

«Հոգեկան առողջության վերականգնում ցերեկային ստացիոնարի պայմաններում» և «Հոգեկան առողջության վերականգնում ստացիոնարի պայմաններում» հիվանդատեսակներով բուժման 75%-ը իրականացվում է ՎԱԾ-երի հիման վրա:

Յուրաքանչյուր եռամսյակ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել տեղեկատվություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի մարտի 25-ի N 46-Ա/1 հրամանով հաստատված ձև N2-ի պահանջներին համապատասխան:

Հիվանդանոցային բժշկական օգնության հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների մատուցման

ՀՀ հազ. դրամ

N	Ծառայության անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը (դրամ)	Նախատեսվում է ծառայությունները ձեռք բերել 2017թ. ընթացքում					
				1-ին եռ	2-րդ եռ	3-րդ եռ.	4-րդ եռ,	Տարեկան քանակը	Ընդամենը գումարը
1.	Հոգեկան առողջության վերականգնում՝ ցերեկային ստացիոնարի պայմաններում	հիվանդ	98400	11	11	18	18	58	5707,2
2.	Սուր հոգեկան խանգարումների բուժում	հիվանդ	196800	2	2	3	3	10	1968,0
3	Հոգեկան առողջության վերականգնում՝ ստացիոնարի պայմաններում	հիվանդ	249700	50	50	75	75	250	62425,0
	Ընդամենը							318	70100,2

*Մատուցվող ծառայությունների քանակները կարող են փոփոխվել կախված հիվանդների քանակից

Ծառայությունների մատուցման ժամկետ՝ պայմանագրի կնքման պահից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական - 3 տուն
Երևանի թիվ 1 գանձապետական բաժին
Հ/Հ՝ 900011016731 ՀՎՀՀ 01506515
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝

Աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյան
Կ.Տ. (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ՝

" Արթմեդ" բժշկական վերականգնողական կենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55ա
"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 157 000 306 116 0300
ՀՎՀՀ 00804703

Տնօրեն՝ Ա. Աբգարյան
Կ.Տ. (ստորագրություն)

Հավելված 2
«03» մարտի 2017 թ. կնքված
N ԱՍՀՆ-ԲԸԱՀԾՁԲ-17/3-Ս ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ			14020000	19861700	25703400	31545100	37386800	43228500	49070100	56080100	63090100	70100200	**70100200**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական - 3 տուն
Երևանի թիվ 1 գանձապետական բաժին
Հ/Հ՝ 900011016731 ՀՎՀՀ՝ 01506515
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝

Աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյան

Կ.Տ. (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ՝

" Արթմեդ" բժշկական վերականգնողական կենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55ա
"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ՝ 157 000 306 116 0300
ՀՎՀՀ՝ 00804703

Տնօրեն Ա. Աբգարյան

Կ.Տ. (ստորագրություն)

Հավելված 3
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն